

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՎԵՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԴԵՐԵՆԻԿԻ

**ՏՐԴԱՏ ԵՊԻՄԿՈՂՈՍ ՊԱԼՅԱՆԸ ՕՍՄԱՆՑԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆՑԱԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՂ
(19-ՐԴ Դ. ՎԵՐՁ 20-ՐԴ Դ. ՄԿԻԶԲ)**

**Է. 00. 05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Պ.Ա. Չոբանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Ա. Խառատյան

բ.գ.թ., դոցենտ
Ռ. Հ. Մելքոնյան

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 5-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղդասյան պող. 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար

պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

ՄՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԿՆԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը 19-րդ դարի վերջերից Օսմանյան կայսրության վարած քաղաքականությունը քրիստոնյա հպատակ ազգերի՝ հայերի, հույների, բուլղարների, սերբերի, ասորիների նկատմամբ դարձել էր առավել անհանդուրժողական և դաժան: Պետական քաղաքականության մակարդակով պարբերաբար կազմակերպվում և իրականացվում էին ոչ միայն բնակչության կոտորածներ ու ջարդեր, արհեստական սով ու հրդեհներ, ունեզրկում, տեղահանություններ, այլև նյութական ու հոգևոր մշակութային արժեքների ոչնչացում ու բռնազավթում, այսինքն՝ արվում էր հնարավոր ու անհնար ամեն ինչ կայսրության տարածքում ոչ մահմեդական ազգաբնակչության հարցերն իրենց՝ թուրքական բռնի մեթոդներով լուծելու և մարդկությանը կատարված փաստի առաջ կանգնեցնելու համար: Այս պայմաններում Կեսարիայի թեմի առաջնորդ, նշանավոր ձեռագրագետ, մատենագետ, հնագետ, բանագետ Տրդատ Եպիսկոպոս Պալյանի կատարած աշխատանքների կարևորումը խիստ արդիական է, քանի որ վերջինիս գործունեության շնորհիվ է, որ այսօր մեզ է հասել Օսմանյան կայսրության, մասնավորապես Կեսարիայի և շրջակայքի պատմա-մշակութային կյանքի համահավաք պատկերը 19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Առաջին անգամ Պալյանն ուսումնասիրության նյութ է դարձրել պատմամշակութային հուշարձաններով այնքան հարուստ Կեսարիան, որ մինչ այդ մի անհասկանալի պատճառով շրջանցվել էր և չէր արժանացել որևէ հետազոտողի ուշադրությանը: Մշակութային տարբեր շերտերի՝ խեթական, նախաքրիստոնեական շրջանի հուշարձանների, ձեռագրագիտության, հնատիպ գրքի, վանքերի պատմության, աշուղների, բանասիրական այլ նյութերի հիման վրա կատարվել և շարունակում են կատարվել գիտական ուսումնասիրություններ, որոնց մեջ ակնհայտ են դառնում մշակութային կորուստները, թուրքական այլամերժ, ազգայնասուղ սուլթանական, երիտթուրքական, քեմալական հանրապետական կառավարությունների՝ ցեղասպան քաղաքականության արդյունքում: Մշակութային հուշարձանների հանդեպ մինչև այսօր էլ շարունակվող բարբարոսությունները, խիստ արդիական են դարձնում մշակութային, պատմական, ձեռագրագիտական, մատենագիտական, բանասիրական արժեքները լուսաբանող ուսումնասիրությունները:

Աշխատանքի նպատակներն ու խնդիրները Ատենախոսության նպատակն է վեր հանել և ներկայացնել Օսմանյան կայսրությունում թուրքական դաժան և անտրամաբանական գրաքննության պայմաններում Տրդատ Եպիսկոպոս Պալյանի կատարած տեղագրական, ձեռագրագիտական, մատենագիտական, հնագիտական աշխատանքներն ու դրանց կորստից փրկելու նպատակով իրականացված հրատարակությունը, և արժևորել նրանց նշանակությունը ժամանակակից գիտության համար: Այդ նպատակով անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին.

1. Կեսարիայում Ս. Կարապետի ժառանգավորաց վարժարանի դերի լուսաբանումը՝ որպես կրթության և մշակույթի կենտրոն: Տրդատ Եպիսկոպոս Պալյանի առաջնորդական ու կրթական գործունեությունը Կեսարիայում:

2. Ձեռագրերի հավաքման կազմակերպման Տրդատ Եպիսկոպոս Պալյանի աշխատանքը և կազմած ձեռագրացուցակները, այդ թվում՝ հունարեն, հայերեն-հունարեն կրկնագիր ձեռագրերի նկարագրությունները:

3. Օսմանյան կայսրությունում տպարանների և գրքագիտության (մատենագիտության) ասպարեզում Պալյանի գործերը և վաստակը:

4. Կեսարիայում՝ Տրդատ Եպիսկոպոս Պալյանի բանասիրական պրպտումները, համադրումը այլ բանաստեղծների նույնաբնույթ աշխատանքների հետ, և հայագիր թուրքերեն առածների և ասացվածքների երկլեզու՝ (հայերեն և թուրքերեն) հավաքածուները:

5. Տրդատ Եպիսկոպոս Պալյանի դերը Օսմանյան կայսրությունում ոչ մահմեդական ժողովուրդների մշակութային ժառանգության ուսումնասիրման գործում (նախաքրիստոնեական շրջանի հուշարձաններ, խեթական արձանագրություններ, լատիներեն և հունարեն տապանագրեր):

6. Երուսաղեմի քրիստոնեական հուշարձաններին նվիրված նկարագրությունը և հայերի ու քրիստոնյա մյուս համայնքների՝ հույների, կաթոլիկների, ասորիների, դպտիների, եթովպացիների հետ հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների հարցերի լուսաբանումը Տ. Եպս. Պալյանի «Ս. Երկիր. Նկարագրություն Սուրբ Երուսաղեմի և սրբազան տեղեաց» աշխատության մեջ:

7. Տրդատ Եպս. Պալյանի «Հայ վանորայք ի Թուրքիա» աշխատության՝ որպես թուրքական ցեղասպան մշակութային քաղաքականության սկզբնաղբյուրի, ուսումնասիրումը:

Ատենախոսության գիտական նորությունը

Տրդատ Եպս. Պալյանի գործերից մեզ հասածը չնչին մասն է այն հսկայական ժառանգության, որ կուտակել էր տարիների իր գործունեության ընթացքում: Ատենախոսության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում և շրջանառության մեջ է դրվում Կեսարիայի և շրջակայքի հոգևոր-մշակութային կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող Պալյանի թողած գիտական ժառանգությունը: Լուսաբանվում և արժևորվում են կորստից փրկված բազմաթիվ արձանագրություններ, հիշատակարաններ, ձեռագրերի և վանքերի նկարագրություններ, բանասիրական հարուստ նյութ:

Հարկ է արձանագրել միաժամանակ, որ Պալյանի ունեցած անտիպ ուսումնասիրություններն ու հավաքածուները ընդհանրապես չեն պահպանվել, ամբողջը ոչնչացվել է Զմյուռնիայի աղետի օրերին:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով հետազոտությունն ընդգրկում է 19-րդ դարի վերջից 20-րդ դարի քսանական թվականների միջակայքը: Հետազոտվող խնդիրների անհրաժեշտությամբ, անդրադարձել ենք պատմական տարբեր ժամանակաշրջանների իրադարձություններին, մասնավորապես դեռևս միջնադարում կեսարահայ հզոր համայնքի ձևավորմանը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը Ատենախոսության մեթոդաբանության հիմքում դրված են ներկայացվող հարցադրումների պատմա-մշակութային և պատմա-վերլուծական քննության սկզբունքները: Նկատի ունենալով

հետագոտվող թեմայի բազմաշերտ բնույթը՝ կատարվել է աղբյուրագիտական, մշակութաբանական նյութերի քննական վերլուծություն:

Աշխատանքի կիրառական նշանակությունը Ատենախոսության բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք հանդիսանալ ձեռագրագիտության, մատենագիտության, տեղագրության, վանական պատմությունների, Կեսարիայի բանահյուսության, ազգագրության հետազոտումնախորություններում: Հետազոտությունը կարող է օգտագործվել նաև նշված ժամանակամիջոցում Օսմանյան կայսրության քրիստոնյա համայնքների նկատմամբ մշակութային եղեռն հասկացության լուսաբանման համար

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հսկանությունը Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված գրքում, հոդվածներում և գիտական զեկուցումներում:

Սկզբնաղբյուրների և գրականության հաստատու տեսություն

Ատենախոսության համար հիմնական աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Տրդատ եպս. Պայլանի աշխատությունները: Կարևոր աղբյուր է նաև Տ. եպս. Պայլանի տպագիր և անտիպ նամակագրությունը¹ ժամանակի գործիչների հետ: Կարևոր են նաև Ա. Ալպոյաճյանի թողոններում² պահպանված նորահայտ նամակները³: Աղբյուրագիտական հարուստ նյութեր են պարունակում «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 19-րդ դ. վերջի 20-րդ դ. սկզբի հայկական պարբերական մամուլը՝ Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Փարիզի, Վիեննայի, Երուսաղեմի հանդեսները, շաբաթաթերթերն ու օրաթերթերը⁴:

Կեսարահայ գաղթօջախի ձևավորման պատմության, Տ. եպս. Պայլանի գործունեության հետ կապված դպրոցական, հոգևոր մշակութային տարբեր բնագավառների հարցերի լուսաբանման նպատակով ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել են Ա. Ալպոյաճյանի աշխատանքները, մասնավորապես՝ Կեսարիայի վերաբերող

¹ Տրդատ եպս. Պալեանի նամակը Կարապետ Բասմաջեանին, «Ծաղիկ», Ա. տպրի, 1891, 39, էջ 4: Պալեանի նամակը Վիեննա՝ Ժառանգաւորաց վարժարանի իր սան, ատամնաբույժ Վահան Իսպէկերեանին, ՀԱ, 1923: Տ. եպս. Պալեանի նամակը (1890, մարտ) պատրիարքական փոխանորդ Ներսէս ծ. վարդապետ Ալանեանին (անտիպ), ԳԱԹ, Թորոս Ազատյանի թողոններում:

² Մինչև վերջերս անհայտ էր նրա և Ա. Ալպոյաճյանի նամակագրությունը, որ պահպանվում է Ա. Ալպոյաճյանի թողոններում (ՄՄ, Ա. Ալպ. թողոն, թղթ. 49, վավ. 66 (2991-2996) և որի հրատարակությունը իրականացրել ենք հետևյալ խորագրերով. Ա. Տրդատ եպիսկոպոս Պալեանի նամակները Արշակ Ալպոյաճեանին, Էջմիածին, 2006, Ա., էջ 81-91: Բ. Արշակ Ալպոյաճյանի նամակները Տրդատ եպս. Պայլանին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2006, 25, էջ 342-350:

³ ՄՄ, Ա. Ալպոյաճյանի թողոն, թղթ. 39, վավ. 65/1036, թղթ. 49, վավ. 66/3124, թղթ. 49, վավ. 66/3134, թղթ. 49, վավ. 66/2991, 66/2992, 66/2993, 66/2994, 66/2995, 66/2996, թղթ. 54, վավ. 15:

⁴ Կ. Պոլիս՝ «Արևելք», «Բիւզանդիոն», «Բիւրակն», «Ծաղիկ», «Լոյս», «Մասիս», «Մանգումլի Էֆեթար», «Փունջ», «Վերջին լուր», Զմյուռնիա՝ «Արևելեան մամուլ», «Դաշինք», «Դափնի», Փարիզ՝ «Բանասեր», Վիեննա՝ «Հանդես ամսօրեայ», Երուսաղեմ՝ «Սիոն»:

երկիասոր ուսումնասիրությունը⁵: Օսմանյան կայսրությունում կրթության, մասնավորապես այլազգի քրիստոնյա համայնքների (միլլեթների) կրթության հարցերի քննարկման համար կարևոր են թուրքագետներ Վ. Գորդլևսկու⁶, Ա. Ժելյայևու⁷, Յու. Պետրոսյանի⁷ աշխատությունները: Առաջնորդական գործունեության, թուրքական գրաքննության և ժամանակի բարդ իրավիճակի հարցերի քննության համար կարևոր են իր ժամանակակիցներ Ն. Ալիևյանի, Գ. Հովսեփյանի, Բ. Քեչյանի, Թ. Գուշակյանի, Ռ. Ջարդարյանի, Հրանտ Սաստուրի, Ե. Երկաթյանի, Վ. Թեքեյանի, Դ. Խաչկունցի, Ս. Մամուրյանի, Մելքոն Սաստուրի, Հ. Մրմրյանի, Հ. Քոսյանի, Ա. Սահակյանի, Թ. Ազատյանի, Վարդան եպս. Տեմիրձյանի աշխատանքները⁸: Պայլանի կազմած ձեռագրագուցակները արժուրելու և

⁵ Ալվոյաձեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, Բ, Գահիրէ, 1937, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէրոյթ, 1961:

⁶ Гордлевский В. А., Избранные сочинения, т. 3, История и культура. Москва, 1962.

⁷ Желтяков А. Д., Петросян Ю. А., История просвещения в Турции (конец XVIII - начало XX в.), Москва, 1965.

⁸ Ալիևյան Ն., Տրդատ եպիսկոպոս Պալեան. Համառոտ ակնարկ մը իր գրական գործունեության վրայ, ՀԱ, 1923, նույնի՝ Երեմիա Չղեպի Քեօմիւրձեան, Կեանքն և գրական գործունեությունը, Մատենագրական ուսումնասիրություն, Վիեննա, 1933: Յովսեփեան Գ., Դէպի լոյս և կեանք, Անթիլիաս, 2002: Архимандрит Гарегин, Поездка в Иерусалим летом 1911 года, Христианский Восток, 1911, т. 1, вып. 1. Բ. Քէլեան, Ռչ հայախօս վայրեր, «Բիւզանդիոն», 1897, 86, նույնի՝ Կոկիկ առաջնորդի մը կոկիկ գործը, «Բիւզանդիոն», 1897, 178, նույնի՝ Ինչ կրնեն մեր առաջնորդներ, «Բիւզանդիոն», 1900, 1004, նույնի՝ Կեսարիոյ առաջնորդն ի Պոլիս, «Բիւզանդիոն», 1910, 4083, Թ. Եպիսկ. Գուշակեան, Ճամբու վերջիշումներ. Սեբաստիայէն Էսկիշէիիր (1913 նոյ. 6 – դեկտ. 12), Ա, Բ, «Բիւզանդիոն», 1914, 5272, 5274, 5280, 5286, 5304, 5313, Ռ. Ջարդարեան, Ս. Կարապետի վարժարանը և Տրդատ եպիսկ. Պալեան, «Արևելեան մամուլ», 1904, Հրանտ Սաստուր, Կ. Պոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, «Շնորհաձակ օրացոյց», 1901, Ե. Երկաթեան, Թալաս և Ս. Կարապետ, «Բիւզանդիոն», 1897, 211, նույնի՝ Կեսարիոյ առաջնորդին նոր ձեռնարկը. «Հրատարակչական միություն», «Բիւզանդիոն», 1898, 369: Վ. Թեքեյան, Կեսարիա երթուղարձի և բնակութեան օրագիր մը (1913 սեպտեմբեր - 1914 յունուար). Ս. Կարապետի վանքը և վարժարանը, «Ժողովուրդի ձայնը», 1921, 811, 813-816, 818-822: Դ. Խաչկունց, Սքեմի տակ երկու մշակներ, «Բիւրակն», 1898: Ս. Մամուրեան, Պալեան Սրբազան և իր վարժարանը, «Արև. մամուլ», 1909, Կեսարիոյ վանքը և իր վարժարանը (Քանի մը թելադրութիւններ), «Դաշինք», 1911, 661: Մելքոն Սաստուր, Կեսարիոյ առաջնորդն և իր վարած դպրոցը, «Բիւզանդիոն», 1906, հմր 2965, նույնի՝ «Բզտան»-ի մեջ տպուած պաշտօնական ստուերը (Կեսարիայի առաջնորդի դէմ), «Բիւզանդիոն», 1908, 3689, նույնի՝ Գաւառի դպրոցները և Ս. Կարապետի բարձրագոյն վարժարանը, «Բիւզանդիոն», 1907, 3279, նույնի՝ Կեսարիոյ առաջնորդը, «Բիւզանդիոն», 1910, նույնի՝ Անհետացող դէմքեր՝ Տրդատ եպիսկ. Պալեան. Իր կեանքը և գործունեությունը, «Վերջին լուր», 1923, 2847, 2849: Հ. Ռոդրիգեան (Մելքոն Սաստուր), Կ. Աբրահամեան, Կեսարիոյ Ս. Կարապետի վարժարանը. Բարձրագոյն վարժարանը և Տրդատ եպս. Պալեան. Կեսարիոյ առաջնորդական աթոռը և առաջնորդներ. Վարժարանին տնօրէնը, «Շնորհաձակ տարեցոյց ս. Փրկչի ազգային հիանդանցի», 1928: Յ. Մրմրեան, Ովսաննա յԵրուսաղէմ. Ս. Յակոբեանց աթոռին պատրիարքն ու միաբանությունը, «Դալինի», 1921: Յ. Քոսեան, Բարձր Հայք, հ. Բ, Կարնոյ գիւղերը, Վիեննա, 1926: Ա. Սահակեան, Հետաքրքրաշարժ յիշատակարան մը, «Բիւզանդիոն», 1901, 1362, Թ. Ազատեան, Հայ ազգագրութեան ջահակիր

գնահատելու հարցում արժեքավոր են Հ. Տաշյանի, Բ. Կոլլեսերյանի, Մուքիաս վրդ. Պարոնյանի, Վ. Թորգոմյանի, Կ. Բասմաջյանի կարծիքները, որ նրանք արտահայտել են նամակների և գրախոսությունների մեջ իսկ ձեռագրական ժողովածուների կորուստների հարցերը լուսաբանելու և Պալյանի ձեռագրագիտական վաստակը գնահատելու համար մեծ կարևորություն են ներկայացնում Ս. Քոլանջանի⁹, Ռ. Իշխանյանի¹⁰ և Գ. Տեր-Վարդանյանի¹¹ ուսումնասիրությունները:

Հայ տպագիր առաջին գրքի թվագրման, հրատարակչի ինքնության, հետագա հրատարակչիների և տպարանների պատմության, հայ գրքի մատենագիտության սկզբնավորման հարցերի, որ արդիական են նաև այժմ, ուսումնասիրության համար անգնահատելի են Գ. Ջարբինալյանի, Ա. Ղազիկյանի, Գ. Գալենյարյանի, Գ. Գովրիկյանի, Գ. Մենելիշյանի, Վ. Թորգոմյանի, Ա. Երիցյանի, Հ. Անասյանի, Ռ. Իշխանյանի¹², Հ. Գևորգյանի¹³, Ջոն Լեյնի¹⁴ աշխատությունները: Օսմանյան կայսրությունում տպարանների հիմնադրման, տպագիր գրքի տարածման, Կ. Պոլսում, Ջնյուռնիայում հայկական և հունական տպարանների գործունեության պատմության հարցերի լուսաբանման համար կարևոր է Ա. Ժելոյակովի ուսումնասիրությունը¹⁵:

Տ. Եպ. Պալյանի՝ վանքերին նվիրված ուսումնասիրության տեղագրության, ժամանակագրության որոշ հարցերի լուսաբանման մեջ կարևոր են հատկապես Հ. Համազասպ Ոսկյանի¹⁶ և Ս. Թիերիի աշխատությունները¹⁷, Ն. Պողարյանի

եկեղեցական մը. Տրդատ եպիսկ. Պալեան, «Աստղաբերդ», Իսթանպուլ, 1951: Վարդան եպ. Տեմիրճեան, Դիմաստուերներ. Ազգային եկեղեցական տիպարներ, Պեղոյա, 1983:

⁹ Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, Էջմիածին, 1965, 1966:

¹⁰ Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, պր. Բ, 1800-1920, Երևան, 1968:

¹¹ Պալեան Տ., Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիռնիայ և ի շրջակայս լոցին. Կազմեց՝ Գ. Տեր-Վարդանեան, Երեան, 2002:

¹² Ջարբինալեան Գ., Հայկական մատենագիտություն, Վենետիկ, Ս. Ղազար, 1883, Հ. Արսեն Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կենսի, Վենետիկ, 1909-1912: Գր. Գալենյարեան, Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ'ալ, ՀԱ, 1894, էջ 361-363, նույնի՝ Աբգար Դայիր և տպագրած Մաշտոցը, ՀԱ, 1912, էջ 385-392: Գր. Գովրիկեան, Հայ տպագրութեանց ամենահին երախայրիքը՝ Պարգատումար, ՀԱ, 1889, էջ 209-212, նույնի՝ Հայ տպագրութեանց ամենահին երախայրիք մ'ալ՝ Կիպրիանոս, ՀԱ, 1889, էջ 260-261: Գ. Մենելիշեան, Հայերեն հին տպագրություններ, ՀԱ, 1896, էջ 318-319, նույնի՝ Հայերեն հին տպագրությունը, ՀԱ, 1896, էջ 253, 351, 380: Վ. Թորգոմեան, Անյիշատակ տպագրություններ, ՀԱ, 1896, էջ 273-274: 1897, էջ 9-11: Ա. Երիցեան, Պատմական տեսություն հայ տպագրութեան մինչև տասնիններորդ դար, «Փորձ», 1881: Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հ. Ա., Երևան, 1959: Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, պր. Բ., (1800-1920), Երևան, 1968:

¹³ Kevorkian R. H., Le livre arménien imprimé, «Le livre arménien a travers les ages», Marseille, 1985.

¹⁴ John A. Lane, The diaspora of Armenian printing 1512-2012. Amsterdam-Yerevan, 2012.

¹⁵ Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.), Москва, 1972.

¹⁶ Ոսկյան Հ., Բարձր Հայրի վանքերը, Վիեննա, 1951:

հողվածաշարքը¹⁸, Երեմիա Չելեպի Քրոնոլոգյանի քարտեզը¹⁹, Լ. Սահակյանի ուսումնասիրությունը²⁰, տեղանունների և ծածկանունների բառարանները²¹: Օսմանյան բռնատիրության ճնշող պայմաններում վանքերում, գրչության կենտրոնների, կրթության զարգացման հարցերին են նվիրված Ն. Ակինյանի, Կ. Տեր-Մկրտչյանի աշխատությունները²²: Թեմայի համար կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն Ա. Սաֆրաստյանի²³, Ա. Փափագյանի²⁴, Ռ. Սաֆրաստյանի²⁵ հրատարակած վավերագրերը, որոնք բացահայտում են թուրքական կառավարության ազգային կրոնական խտրական քաղաքականությունը, որի վերջնական նպատակը «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսն էր:

Թրքախոս հայ աշուղների, նրանց երկլեզու, երբեմն էլ եռալեզու երգերի վերլուծության, հեղինակային պատկանելության հարցերի, ասացվածքների և ժողովրդական բանահյուսության մյուս նմուշների ուսումնասիրման համար մեծ

¹⁷ Thierry J.-M., Monasteres Arméniens du Vaspurakan. RÉArm., t. XI, 1975-76. Le couvant Saint-Georges de Xule (Xulevank), RÉArm., t. XXII, 1990-91. Répertoire des monasteres arméniens, par Michel Thierry, Brepols-Turnhout, 1993.

¹⁸ Պողարեան Ն., Հայկական վանքեր, Արգելանայ Ս. Աստուածածին կամ Տեր Յուսկան որդու վանք, Կայիփուփ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի վանք, Միոն, 1952, նույնի՝ Ս. Գրիգոր Լուսատրչի վանք, «Միոն», 1953, նույնի՝ Սիրահայեաց Ս. Աստուածածին, «Միոն», 1957:

¹⁹ Ուրվհոգյան Գ., Երեմիա Չելեպի Քրոնոլոգյանի նորահայտ քարտեզը, ՊԲՀ, 1997, 2: Սևուհյան Gabriella, Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal i al XVII secolo, Bologna, Longo Editore Ravenna, 2000.

²⁰ Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբեղո, Սպեր, Դեբջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007:

²¹ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Գ., Երևան, 1991: Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:

²² Ն. Ակինեան, Բաղէշի դպրոցը 1500-1704. Նպատ ուր Հայոց Եկեղեցու պատմութեան և մատենագրութեան, Վիեննա, 1952: Կ. Տեր-Մկրտչեան, Մահմեդական լուծը և նրա բռնութեան ներքոյ ծաղկող հայ վարդապետարանները, Արարատ, 1913:

²³ Սաֆրաստյան Ա., Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի և դաւանանքների մինիստրութեան ներկայացուած հայկական վանքերի և եկեղեցիների ցուցակներն ու թաքրիքները (1911-1913 թթ.), Էջմիածին, 1965, 1966:

²⁴ Փափագյան Ա., Ցեղասպանություն և գոյատևման պայքար, Երևան, 2000, նույնի, Հասաստի վկայություններ Հայոց ցեղասպանութեան մասին, Լոս Անճելոս, 2007:

²⁵ Սաֆրաստյան Ռ., Թուրք-հայկական պատերազմի շրջանի թուրքական վավերագրեր (1920 թ. նոյեմբեր), Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2006, 25:

կարևորություն ունեն Ն. Ակինյանի²⁶, Ղ. Աղայանի²⁷, Մ. Նուպարյանի²⁸, Խ. Ամիրյանի²⁹, Թ. Ազատյանի³⁰, Ա. Ղանալանյանի³¹, Բ. Չուգասզյանի³² աշխատանքները:

Օսմանյան կայսրության տարածքում հայտնված խեթական արձանագրությունների, նախաքրիստոնեական հուշարձանների, բյուզանդական շրջանի հունարեն արձանագրությունների վերաբերյալ ուշագրավ կոստանդուպոլ հրապարակումներ են արել հենց Տրդատ եպս. Պալյանը³³, Հ. Տաշյանը³⁴, Ա. Ալպոյաճյանը³⁵, Կ. Բասմաջյանը³⁶, Վ. Մելքիսեդեկյանը³⁷: Թեև այն ժամանակ դեռ նոր նոր էին սկսվել հավաքչական աշխատանքները, և խեթագիտությունը «տակավին սաղմնային վիճակի մեջ էր, և հեթերեների բառազանձին մեծագոյն մասը մեզի ծանոթ չէր», այնուամենայնիվ ժամանակակից պատմագիտության ուսումնասիրությունները (Ն. Մարտիրոսյան, Գր. Ղափանցյան, Վ. Խաչատրյան, Ա. Քոսյան) հաստատում են Պալյանի և մյուսների դեռևս շատ ենթադրական դիտարկումները:

Երուսաղեմի քրիստոնեական հուշարձանների նկարագրությունները, հայերեն արձանագրությունները, հայերի, հույների և կաթոլիկների փոխհարաբերությունները և անվերջ վեճերն ու տարաձայնությունները մշտապես եղել են ուսումնասիրողների³⁸

²⁶ Ակինեան Ն., Հայ աշուղներ, Ժողովրդական հայ երգիչներ և տաղասացք: Հաւաքեց Տրդատ եպս. Պալեան, հ. Ա, Իզմիր, 1911, հ. Բ, 1912, ՀԱ, 1911, էջ 760-763, 1914, էջ 362-364:

²⁷ Աղայան Ղ., Հայոց այժմյան բանավոր երգերը, տե՛ս Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 201-205:

²⁸ Նուպարեան Մ., Գեր. Պալեան սրբազանի նոր հրատարակությունը, Դաշինք, 1914, 1442:

²⁹ Ամիրեան Խ., Թուրքալեզու հայ աշուղներ (Օսմանեան կայսրութիւն. 16-20-րդ դարեր), Լոս Անջելես, 1993:

³⁰ Ազատեան Թ., Հայ ազգագրութեան ջահակիր եկեղեցական մը. Տրդատ եպիսկ. Պալեան, «Աստղաբերդ» մշակութային ամսօրեայ հանդէս, Իսթանպուլ, 1951, էջ 49-53:

³¹ Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960:

³² Չուգասզյան Բ., Գրիգորիս Աղթամարցու տաղերի պարսկերեն վերծանումը, ՊԲՀ, 1960, 1:

³³ Տ. եպս. Պալեան, Տապանագիր մը, ՀԱ, 1894, էջ 315-316, նույնի՝ Նախակիլիկեան Հաթեան արձանագրութիւն Ագրակի, ՀԱ, 1896, էջ 161-162, նույնի՝ Հաթերու պատկանեալ կնիքներ, ՀԱ, 1898, էջ 14-16, նույնի՝ Նախակիլիկեան-հաթեան արձանագրութեամբ երկու կնիք, ՀԱ, 1898, էջ 139-140, նույնի՝ Հին Մազաքա (Կեսարիա) գտնուած չէ, Բիւզանդիոն, 1900, 1073, էջ 1, նույնի՝ Նախակիլիկեան-Հաթեան նոր արձանագրութիւն մը ի Կեսարիա, «Արարատ», 1900, էջ 298-300:

³⁴ Տաշեան Հ. Յ., Նախակիլիկեան-հաթեան արձանագրութիւնք, ՀԱ, 1894, էջ 317-320:

³⁵ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937:

³⁶ Բասմաջեան Կ., Հաթեան արձանագրութեանց մասին դիտողութիւնք, ՀԱ, 1894, էջ 383-384, նույնի՝ Երկու նոր հաթեան կնիքներու առթիւ, ՀԱ, 1898, էջ 381-382, նույնի՝ Երկու խօսք «Նախակիլիկեան-հաթեան նշանագրով կնիքներու» մասին, ՀԱ, 1899, էջ 51-52:

³⁷ Մելքիսեդեկեան Վ., Նախակիլիկեան-հաթեան նշանագրով նոր կնիք մըն ալ, ՀԱ, 1899, էջ 149-150:

³⁸ Յովհաննէս Հաննա, Գիրք պատմութեան սրբոյ և մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս և սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Կ. Պոլիս, 1782: Մկրտիչ վրդ. Արծրունեան, Մտորագրութիւն սրբոյ քաղաքին յԵրուսաղէմի քննութեամբ և համառօտեալ ի Հաննա և ի Մարինոս պատմագրաց, Երուսաղէմ, 1859: Մկրտիչ եպս. Աղանունի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ երկրին մէջ. Ուսումնասիրութիւններ, Երուսաղէմ, 1931: Չորսնյան Պ., Կրօնագիտական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին,

ուշադրության կենտրոնում, իսկ կրոնական ծեսերի, արարողությունների մանրակրկիտ նկարագրությունների աղբյուր կարող է համարվել Պալյանի ուսումնասիրությունը³⁹: Քրիստոնյա մյուս համայնքների և հայ-եթովպական, հայ-ղպտիական հարաբերությունների լուսաբանության գործում կարևոր տեղ են զբաղեցնում Կարապետ Տեր-Մկրտչյանի⁴⁰, Հ. Անապանի⁴¹, Ա. Ալպոյաճյանի⁴² ուսումնասիրությունները:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ընդգրկում են ութ ենթագլուխներ, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորոգյթը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և ժամանակագրական սահմանները, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Կեսարահայ գաղթօջախի ձևավորումը և Տրդատ եպիսկոպոս Պալյանի առաջնորդական ու կրթական գործունեությունը», բաժանվում է երկու ենթագլխի: Առաջին ենթագլխում, որ վերնագրված է «Կեսարիայի թեմի առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալյան (կենսագրություն)» համառոտ ներկայացվում են՝ Կապադովկիայի և Կեսարիայի էթնիկական պատկերը նախքան թուրքական նվաճումները և այնուհետև կրած փոփոխությունները մինչև 19-րդ դ. վերջերը, Կեսարիայի առաջնորդական թեմի կազմավորումը (1178 թ.), Պալյանի կենսագրությունը: Կենսագրության մեր շարադրանքը խարսխված է նորահայտ անձնական նամակների, ինչպես նաև նրա գործերի (տպագիր և անտիպ) մատենագիտության և մամուլի հարուստ նյութերի հիման վրա: Լուսաբանվել են Երուսաղեմի սուրբ Հակոբյանց միաբանությունում այդ շրջանի նրա արդյունավետ գործունեությունը: Հատկապես կարևոր փուլ էր 1887-1910 թթ. Կեսարիայի թեմի առաջնորդի պաշտոնում նրա բազմաբնույթ գործունեությունը:

Երկրորդ ենթագլխում՝ - «Ս. Կարապետի ժառանգավորաց վարժարանը ազգային կրթության կենտրոն Կեսարիայում», մանրամասն քննարկվում է Օսմանյան կայսրության կրթական համակարգում ազգային դպրոցների գոյությունն ու ոչ դյուրին

Երևան, 1981: Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007:

³⁹ Տ. Վրդպոս. Պալեան, Սուրբ երկիր. Նկարագրութիւն սուրբ Երուսաղեմի և սրբազան տեղեաց, հ. Ա., Կ. Պոլիս, Նշան Պէրպէրեան հրատ., 1892:

⁴⁰ Путешествие архиепископа Хованэса в Абиссинию (Армянский текст, открытый и подготовленный для издания еп. Карапетом, с русским переводом Н. Я. Марра и с примечаниями Б. А. Тураева), Христианский Восток, т. 3, вып. 1, 1914, с. 6-16.

⁴¹ Անապան Հ., 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

⁴² Ալպոյաճեան Ա., Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հապէշիստան ԺԷ դարուն, Կահիրէ, 1946:

գործունեությունը:

Կարծարանի բացման ժամանակը գրականության մեջ ընդունված է համարել 1830-ական թվականները, մինչդեռ Տրդատ եպս. Պայանի շնորհիվ մեզ հասած 1784 թ. հիշատակարանում առկա է «նորահաստատ դպրատուն»-ը, որով սրբագրվում է վերոհիշյալ կարծիքը, և ըստ այդմ պետք է ընդունել վարժարանի բացման նոր տարեթիվը՝ 1776-1798 թթ., թեմի առաջնորդ Մատթեոս եպս. Գարամանյան-Շովհաննիսյանի նախաձեռնությամբ, որի գործունեության վերաբերյալ տվյալները ևս պահպանվել են Պայանի կազմած Գավազանագրքում: Այս ենթագլխում բացահայտվում է Տրդատ եպս. Պայանի բացառիկ կարողությունը կարճ ժամանակամիջոցում կազմակերպելու ուսումնական պրոցեսը՝ բարեկարգելով, նորոգելով վանքն ու վարժարանի շենքը, հիմնելով գրադարան և դպրոցն ապահովելով նաև անհրաժեշտ օժանդակ այլ նյութերով ու պարագաներով: Պայանի ջանքերի շնորհիվ է, որ կրթության նախարարության կողմից 1893 թ. տրված արտոնագրով հաստատվել է Ս. Կարապետի վարժարանը որպես «մեթոդիկ իտալի և այլ»՝ երկրորդական և բարձրագույն դպրոց թուրքական կրթության համակարգում, միաժամանակ պահել է նաև Ժառանգավորաց անունը՝ դպրոցը հնարավոր որևէ ոտնձգությունից պաշտպանելու համար: Նույն թվականին Պայանը հրատարակել է վարժարանի իր կազմած ծրագիր-կանոնադրությունը, քանի որ միասնական ընդունված ուսումնական ծրագիր գոյություն չունեի ազգային դպրոցների համար: Ատենախոսության մեջ ուսումնասիրվում է կարեւորվում է վարժարանի դերն ու նշանակությունը ազգային կրթության ու դաստիարակության ասպարեզում: Պայանի ղեկավարությամբ գործող վարժարանի շնորհիվ թրքախոս Կեսարիայում վերականգնվեց ոչ միայն ազգային ինքնագիտակցությունը, այլև իր գոյությամբ այն նվազեցրեց հայ մանուկների հաճախումը այլադավան, օտար դպրոցներ:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Տրդատ եպիսկոպոս Պայանի գիտական հետաքրքրությունները»**, բաղկացած է չորս ենթագլուխներից, որտեղ քննության են ենթարկվում ձեռագրագիտության, գրքագիտության, բանահյուսության և վանքերի մասին Պայանի երկերը:

Առաջին՝ «Տրդատ եպիսկոպոս Պայանի ձեռագրագիտական աշխատանքը և կազմած ձեռագրացուցակները» ենթագլխում ներկայացվում է Կեսարիայի և շրջակայքի գրչության օջախներում, վանքերում գրված և ընդօրինակված (Ժ-ԺԹ: դդ.) ձեռագրերի նկարագրությունները, Հ. Տաշյանի մշակած սկզբունքով կազմած նրա ձեռագրացուցակները, ինչպես նաև մասնավոր հավաքածուների նկարագրությունները: Հարկ է նկատել, որ Պայանի հայերեն ձեռագրական հավաքածուների պահպանված նկարագրությունների մեջ հանդիպում են ոչ քիչ թվով նաև հունարեն ձեռագրեր, ինչը վկայություն է հայ-հունական մշակութային դարավոր փոխհարաբերությունների մասին: Ատենախոսության մեջ ներկայացված են Պայանի հավաքած 17-19-րդ դդ. արիսիվային նյութերը, վավերագրեր, կնիքներ՝ ինչպես հայերեն, այնպես էլ հայատառ թուրքերեն գրություններով: Ձեռագրերով այնքան հարուստ Կեսարիայից և շրջակայքից պահպանվել են պատահաբար փրկված ընդամենը 10 ձեռագիր և Պայանի հրատարակած 170 նկարագրություն:

Երկրորդ՝ «Հայ տպագիր գրքի պատմության ուսումնասիրությունը և Պայանի

վաստակը գրքագիտության (մատենագիտության) սասպարեզում» ենթագլխում լուսաբանվում են Օսմանյան կայսրությունում՝ Կոստանդնուպոլսում և Զևյոտնիայում տպարանների հիմնադրման և պատմության, հայերեն տպագիր գրքերի թվագրման, առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի ինքնությունը պարզելու, հայ հնատիպ գրականության մատենագիտություններ կազմելու հարցերը: Անվանի մատենագետ, բանասեր Հ. Անասյանը Պայանի գիտական վաստակը գնահատողներից մեկն էր և վերջինիս կատարած գործը հնատիպ գրքերի հայտնաբերման և ճշտումների ուղղությամբ համարել է բավականին ակնառու:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է՝ «Տրդատ եպիսկոպոս Պայանի բանահյուսական պրպտումները և «Հայ աշուղներ»-ի հավաքածուն», որտեղ ներկայացվում է Պայանի բանահյուսական ժողովածուն, որ ընդգրկում է այս ժանրի գրեթե բոլոր տեսակները՝ աշուղական արվեստ, հեքիաթներ, զրույցներ, օրոքոցայիններ, սիրերգեր, անտունիներ, հանելուկներ, առածներ ու սասցվածքներ՝ գրառված Կեսարիայի տարբեր գյուղերի բարբառներով: Առածների և սասցվածքների հավաքածոյի մեջ Պայանը ներկայացրել է մինևսյն օրինակի նույնիսկ տարբերակները՝ տարբեր բարբառներով, հաճախ էլ առկա են հայերենին զուգահեռ թուրքերեն օրինակները, որոնց թիվը Պայանի հավաքածոյի մեջ ավելի քան 13 հազար էր, և նա մտադրություն ուներ առանձին հրատարակել նաև թուրքերեն հավաքածու: Պայանի բանահյուսական նյութերից ամենամավախունը, սակայն, աշուղների հավաքածուն է հայերեն և հայատառ թուրքերենով: Վերջին հանգամանքը ժամանակակից թուրք հեղինակներին առիթ է տվել «տեսություններ» հորինել և հայ աշուղներին, որ ստեղծագործել են թուրքերեն, համարել ազգությամբ թուրք ու նրանց ստեղծագործություններն էլ՝ թուրքական մշակույթի անբաժան մաս, և դեռ ավելին՝ «մշակույթի գողեր» անվանել իրական տերերին՝ այն հեղինակներին, ովքեր համարձակվել են թուրքալեզու հայ աշուղների ստեղծագործությունների ուսումնասիրությամբ ճշտել նրանց ազգային պատկանելությունը: Պայանը հատուկ վերաբերմունք ունենալով աշուղների հանդեպ՝ մեծ դեր և նշանակություն է տվել նրանց հոգևոր-մշակութային գործունեությանը ժողովրդի կյանքում, համարել յուրատեսակ քարոզիչներ, որ պահպանում են ժողովրդի ինքնությունն ու ոգին օտար տիրապետության դժվար պայմաններում:

Չորրորդ ենթագլխում, որ վերնագրված է՝ «Տ. Եպիսկոպոս Պայանի «Հայ Վանորայք ի Թուրքիա» աշխատությունը թուրքական ցեղասպան մշակութային քաղաքականության սկզբնաղբյուր», քննության են ենթարկվում Պայանի աշխատության ընդգրկած աշխարհագրությունը, սղրդյունները, կառուցվածքն ու նպատակները:

19-20-րդ դարերի ընթացքում կայսրության վարչական բաժանման մեջ բավական հաճախ կատարվել են փոփոխություններ, որի հետևանքով փոխվել են վարչական միավորների (կուսակալություն-վիլայեթ, սանջակ, կազա) սահմանները և անունները: Իրականացվող փոփոխությունները ունեին հատակ նպատակ՝ յուրաքանչյուր վիլայեթում հայերին դարձնել փոքրամասնություն, իսկ մահմեդականներին՝ մեծամասնություն: Մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, մասնավորապես՝ գրաքննության կամայականությունները միայն խորացնում էին

վաղուց ի վեր գոյություն ունեցող հակասությունները և խտրականությունը ազգային-դավանական փոքրամասնությունների և մահմեդական մեծամասնության միջև:

Բազմաթիվ հայ մտավորականներ, որոնց թվում և Տրդատ եպիսկոպոս Պալյանը, ձեռնամուխ են եղել մշակութային տարատեսակ հուշարձանների հավաքման և հրատարակման հրատապ գործին այս պայմաններում: Պալյանը վանքերի նկարագրությունների համար ինքն անձամբ է շրջել և նյութեր հավաքել: Ականատեսի նրա այս նկարագրությունները այդ վանքերի՝ իր ժամանակի կացության և յուրահատկությունների արձանագրումն են, դրանով էլ ստույգ վավերագրի արժեք ունեն: Նկարագրություններն արել է ըստ գավառների, իր աշխատանքի մասին գրելով, որ ամենևին հավակնություն չունի այն համարելու «տեղագրություն» կամ «պատմություն»: Չնայած այս գուսպ ինքնագնահատականին՝ նրա «Հայ վանորայք»-ը թե՛ բովանդակությամբ, և թե՛ կառուցվածքով՝ իր մշակած ավարտուն և լիակատար հարցակարգով, վանքերի համակողմանի ուսումնասիրություն է: Նա կազմել է նաև Անկյուրիայի, Կեսարիայի, Զմյուռնիայի, Մեբաստիայի, Մարզվանի, Տրապիզոնի վանքերի առաջնորդների գավազանագրքերը: Պալյանի այս գործը Կեսարիայի և կեսարահայոց, Մալաթիայի, Մեբաստիայի, Ամասիայի, Եփրոկիայի, Բարձր Հայքի, Տրապիզոնի պատմության առաջնակարգ և վավերական սկզբնաղբյուր և միաժամանակ, ձեռագրական և վիմագրական աղբյուրների տիպիների վրա հիմնված համակողմանի ուսումնասիրություն է, որը սույն ատենախոսության մեջ ըստ արժանվոյն գնահատվում է առաջին անգամ: Վանքերի մինչև այսօր մեզ հասած նրա նկարագրությունների թիվը հասնում է 346-ի: Պալյանի նկարագրած այդ վանքերն այսօր մեծ մասամբ չկան, կամ գրեթե բոլորը ավերված են, ուստի և նրա՝ հիմնականում ականատեսի նկարագրություններ պարունակող հողվածները նույն վանքերին վերաբերող պահպանված եզակի վկայություններ են և սկզբնաղբյուրի արժեք ունեն: Պալյանի նկարագրություններից պահպանվել են միայն հրատարակվածները, ուստի և այսօր այդ հուշարձանները գիտությանը հայտնի լինելու չափ մասամբ փրկված են բացառապես նույն նկարագրություններով:

«Հայ վանորայք»-ի առաջին հրատարակությունից անցել է արդեն հարյուր տարի, սակայն նրա այժմեականությունը ոչ միայն չի նվազել, այլև ավելի է աճել Օսմանյան կայսրությունում մշակութային ժառանգության հետազոտման տեսանկյունից:

Ատենախոսության **եզրորդ գլուխը՝ «Տրդատ եպիսկոպոս Պալյանը՝ Օսմանյան կայսրության տարածքում ոչ մահմեդական ժողովուրդների մշակութի ուսումնասիրող»**, բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «Նախաքրիստոնեական շրջանի հուշարձանների ուսումնասիրությունը», քննարկվում են խեթական, նախաքրիստոնեական շրջանի հունական և լատինական հուշարձանների վերաբերյալ Պալյանի հարորդած տեղեկությունները և արտահայտած տեսակետները: Մշակութային բոլոր շերտերը հին շրջանից սկսած եղել են Տրդատ եպիսկոպոս Պալյանի ուշադրության կենտրոնում: Թեև այն ժամանակ դեռ նոր-նոր էին սկսվել հավաքչական աշխատանքները և խեթագիտությունը «տակավին սաղմնային վիճակի մեջ էր, և հեթերեների բառազանձին մեծագոյն մասը մեզի ծանօթ չէր», այնուամենայնիվ Ազգակ հայաբնակ թրքախոս գյուղի հայկական հին գերեզմանատանը գտնված խեթական նշանագրերով արձանագրությունը

իրավամբ իրեն շատ կարևոր և հետաքրքրական է թվացել, որին անորոշորձեղ է մի քանի անգամ՝ ենթադրելով որ հսկայական այդ քարը հեռվից չէր կարող բերված լինել, այլ հարյուրավոր տարիներ գտնվել է նույն գերեզմանոցում և գուցե նաև առնչություն կարող է ունենալ տեղացիների՝ կապադովկիացիների մշակույթի հետ:

Խեթագիտության հետագա զարգացման ընթացքում արձանագրությունների ընթերցման և վերծանությունների շնորհիվ, իհարկե շատ հարցեր նորովի են քննարկվել ու լուսաբանվել, որտեղ իրենց մեծ ներդրումն ունեն եվրոպացի և հայ արևելագետները, սակայն Տ. Պայանն առաջիններից էր խեթական արձանագրությունների գիտական արժեքի գնահատության մեջ: Ժամանակակից խեթագիտական ուսումնասիրությունները (Ն. Մարտիրոսյան, Գր. Ղափանցյան, Ս. Երեմյան, Ի. Դյակոնով, Վ. Խաչատրյան, Ա. Քոսյան) հաստատում են Պայանի արտահայտած ենթադրական դիտարկումները:

Երկրորդ ենթագույնը վերնագրված է՝ «Երուսաղեմի քրիստոնեական հուշարձանների նկարագրությունը և հայերի ու քրիստոնյա մյուս համայնքների հետ հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների հարցերը «Սուրբ Երկիր. Նկարագրություն Ս. Երուսաղեմի և սրբազան տեղեաց» աշխատության մեջ»: Այս ենթագլխում քննարկված են Պայանի «Սուրբ Երկիր. Նկարագրություն Ս. Երուսաղեմի և սրբազան տեղեաց» աշխատության մեջ ներկայացված հիմնահարցերը՝ Երուսաղեմի սրբատեղիների պատմությունը, այլ համայնքների՝ հունական, կաթոլիկ, ասորի, դպտի, եթովպական եկեղեցիների հետ հայերի հարաբերությունները, իրավունքները ու նաև նրանց ծեսերի հանգամանայի նկարագրությունը:

Երուսաղեմի սրբավայրերի ուսումնասիրությունը պայմանավորված էր Երուսաղեմի Եսայի Թալասցի Պատրիարքի հանձնարարությամբ: Պայանի շատ ժամանակակիցներ նշում են, որ նա պատրաստել է նաև ուղեցույց: Երուսաղեմի՝ համաքրիստոնեական այդ կենտրոնի պատմությունը Պայանը սկսում է վարչական կարգավիճակը ներկայացնելով, այնուհետև անցնում է սրբավայրերի նկարագրությանը, նախքան այդ անորոշորձեղ նաև Յոպպե, Ռեմլե քաղաքների արաբական ճամփ-Էլ-Քէյիր, ճամփ-Շեյխ-Նաբան, ճամփ-Էլ-Ապիատ մզկիթների նկարագրությանը:

Պայանը համոզված՝ անշուշտ, որ քրիստոնյա յուրաքանչյուր ազգ իր համար փառք ու պարծանք պատիվ է համարել Երուսաղեմում և շրջակայքում որևէ արտոնություն, իրավունք, ամենավորքիկ մի տարածք ունենալը, և ոչինչ չի խնայել դրա համար, այնուհետև նկարագրում է հայոց Ս. Հրեշտակապետի, Ս. Փրկչի, Ս. Հակոբի վանքերը և ազգային այլ հաստատություններ (վարժարանը, թանգարանը, տպարանը, մատենադարանը), ինչպես նաև համաքրիստոնեական Ս. Հարության, Ս. Օննյան, Ս. Աստվածածնի տաճարները և ընդգծում այնտեղ հույն ու կաթոլիկ եկեղեցիների հետ հայերի ունեցած հավասար իրավունքները, արտոնությունները և մասնակցությունը՝ չնայած վերջիններիս հետ ունեցած մշտական վիճաբանություններին ու բախումներին, որի հետևանքով հայերը հաճախ զրկվել են իրենց սեփականությունից: Պայանի այս աշխատությունը հատկապես ուշագրավ է նրանով, որ մեծ տեղ է հատկացրել Երուսաղեմում արևելյան քրիստոնյա ազգերի՝

ասորիների, էթովպացիների, ղպտիների Ս. Հարության տաճարում հոգևոր-մշակութային կյանքի և կրոնական ծեսերի նկարագրությամբ, կարևորվել են հայ-էթովպական, ասորիների, ղպտիների հետ եկեղեցական հարաբերությունները, որոնք ամրապնդվել են հատկապես Քաղկեդոնի ժողովից հետո, երբ էթովպական եկեղեցին հայ, ասորի և ղպտի եկեղեցիների հետ միասին մերժել էր այդ ժողովի որոշումները և ընդունել հայ եկեղեցու առաջատարությունը: Այսպիսով, Օսմանյան կայսրությունում ազգային-կրոնական համայնքները՝ ասորիները, ղպտիները, հաբեշները որպես քրիստոնյա միաբնակ ժողովուրդներ Հայկական եկեղեցու իրավասության էին ենթարկված, ինչպես բոլոր երկաբնակները՝ հունական եկեղեցուն, բացի կաթոլիկներից, և կառավարության հետ հարաբերություններ կարող էին ունենալ միայն Երուսաղեմի հայոց պատրիարքարանի միջոցով: Իր աշխատության մեջ Երուսաղեմի արևելյան հնագույն քրիստոնյա ազգերի փոխհարաբերություններն է ներկայացրել Տ. Պալյանը, թուրքական գրաքննության թույլատրած սահմաններում: Նախատեսել էր աշխատության երկրորդ հատորում ավելի հանգամանորեն ներկայացնել ղպտիների և էթովպացիների վանքերը:

Կաթոլիկ աշխարհը ներկայացնելիս Պալյանն օգտագործել է ընդունված «լատինք» եզրը: Ս. Հարության, Ս. Օմնյան և Ս. Աստվածածնի տաճարների մեջ ընդհանուր են եղել ոչ միայն տաճարի որոշակի հատվածներ, այլև ծիսական որոշ արարողություններ, որոնց մանրակրկիտ նկարագրությունը Պալյանի՝ նաև ի պաշտոնե (ավագ թարգմանն էր), որպես ականատեսի և անմիջական մասնակցի տպավորությունները, նրա «Սուրբ Երկիր...» աշխատությունը դարձնում են հավաստի աղբյուր: Աշխատության մեջ Պալյանն անդրադարձել է դավանական և ազգամիջյան հարաբերությունների պատմության դրվագներին, ինչպես, օրինակ, նախկինում հայոց պատկանած որևէ շինություն (մատուռ, եկեղեցի, վանք) դարձել է հունական սեփականություն, կամ հաբեշական հատվածը անցել է հայերին, հետո էլ՝ հույներին: Գողգոթայի սեփականության իրավունքի շուրջ 1422 թ. սկսած մշտական վեճերի մեջ են եղել հայերն ու վրացիները: Հինգ անգամ ձեռքից ձեռք անցնելուց հետո, ի վերջո հայ-վրացական վեճերը դադարել են, երբ հայերը Եգիպտոսի սուլթանից ստացել են տաճարում այլ տեղ գնելու իրավունք և 1439թ. կառուցել հայկական եկեղեցի՝ «Երկրորդ Գողգոթա անվամբ», իսկ վրացիների ունեցածը կարճ ժամանակ հետո անցել է հույներին:

Հայոց պատրիարքության նստավայր Սրբոց Հակոբյանց վանքի առիթով նույնպես վրացիների և հույների հետ պատկանելիության շուրջ հարցեր են առաջացել, որոնք ժամանակի ընթացքում հարթվել են:

19-րդ դարի երկրորդ կեսին Երուսաղեմում ձեռք բերած տարածքներում, որտեղ ռուսները սկսել են կառուցել իրենց եկեղեցին, շինարարության ժամանակ հայտնաբերվել են հայկական խճանկար հատակի հատվածներ, հայերեն արձանագրություններով: Հետագա ուսումնասիրությունները հաստատեցին Պալյանի վարկածը, որ գտնվածը հայկական վանքերից Անաստաս վարդապետի հիշատակած Պա/ն/տավանք կոչվածն է, իսկ արձանագրությունների հնագրական տվյալները թույլ են տալիս թվագրելու այն 5-րդ դարով, և հետևաբար հայերի գոյությունը Երուսաղեմում և շրջակայքում վկայված է 5-րդ դարում:

Իր ժամանակի եկեղեցական ծիսակատարությունների և հանդեսների Պայլանի մանրակրկիտ նկարագրությունները եկեղեցական արարողակարգի պատմության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրի արժեք ունեն:

Տրդատ Եպս. Պայլանի բազմակողմանի գործունեության և թողած գիտական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կարևոր սկզբնաղբյուր է Օսմանյան կայսրության պատմության և հպատակ քրիստոնյա բնակչության մշակութային ժառանգության հետազոտման, ինչպես նաև վերջինիս հանդեպ թուրքական պետության վարած ժխտողական և բնաջնջման քաղաքականության բացահայտման համար:

Եզրակացություն մեջ ամփոփված են աստենախոսության հիմնական արդյունքները.

1. Կեսարիան Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերից էր, որտեղ թուրքական իշխանությունները պարբերաբար բռնազաղթերով ու տեղահանություններով իրենց բնակավայրերից հեռացնելով քրիստոնյաներին և փոխարենը մահմեդականներ բնակեցնելով, փոխեցին ազգաբնակչության էթնիկ պատկերը: 19-րդ դարի կեսերին Կեսարիայի ազգաբնակչության մեծամասնությունն արդեն կազմում էին թուրքերը, իսկ քրիստոնյաները՝ հայերը և հույները, հիմնականում դարձել էին թրքախոս:

2. Դեռևս 1784 թ. հիմնադրված Կեսարիայի Ս. Կարապետի վարժարանը 1888 թ. Տրդատ Եպիսկոպոս Պայլանի՝ առաջնորդական պաշտոնը և վարժարանի տեսչի (տնօրենի) պարտականությունները ստանձնելուց հետո զարթոնք ապրեց: Վարժարանը դարձավ ազգային կրթության եւ դաստիարակության կենտրոն ամբողջ Կեսարիայում, դպրոց, ուր հաճախում էին ոչ միայն կեսարացիներ, և որի համբավը տարածվել էր Կեսարիայի սահմաններից դուրս:

3. Վարժարանին կից Ս. Պայլանը հիմնել էր թանգարան, կարգի բերել և համարել մատենադարանը և գրադարանը, ինչպես նաև ձեռք բերել ուսումնական պրոցեսին անհրաժեշտ օժանդակ այլ պիտույքներ:

4. Տ. Եպս. Պայլանը ոչ միայն Ս. Կարապետի վարժարանի հիմնադիրն էր, այլև մշակել և իրականացրել էր կրթության միասնական մի համալիր ծրագիր իր առաջնորդական վիճակում՝ Կեսարիայի ողջ նահանգում: Իր գործունեության ընթացքում հիմնել է 18 դպրոց, կառուցել երկու և նորոգել երեք եկեղեցիներ:

5. Որպես իսկապես հոգևոր առաջնորդ՝ Տրդատ Եպս. Պայլանն իրեն հատուկ դիվանագիտությամբ կարողացել է կանխել հայ-թուրքական բախումները և փրկել է հարյուրավոր հայ ընտանիքներ Կեսարիայում և Թումարգայում թուրք մոլեռանդ խուճանի հերթական ավազակային հարձակումներից (1895-1896 թթ., 1903 թ.): Ֆիզիկական բնաջնջումից ազատելով՝ փրկել է նաև հոգևոր ուժացումից, իր գործունեությամբ թույլ չտալով, որ հայ մանուկները հաճախեն այլադավան քարոզիչների բացած օտար դպրոցներ և այլ կրթական հաստատություններ:

6. Առաջնորդի գործադրած ջանքերի շնորհիվ գրեթե ամբողջովին թրքախոս դարձած, սակայն ազգային ինքնագիտակցությունը պահպանած Կեսարիան վերադառնում էր իր ինքնությունը՝ կրկին դառնալով հայախոս:

7. Տրդատ եպս. Պալյանի կազմած ձեռագրացուցակները՝ 170 ձեռագրերի նկարագրություններով բացառիկ եզակի աղբյուր են Գեսարիայի և շրջակայքի գրչագրական դպրոցների, ձեռագրական մշակույթի մասին: Պահպանված նկարագրությունների մեջ հարկ է նշել հայերեն-հունարեն կրկնագիր հավաքածոյի, հայերեն կրկնագիր ավետարանի և հայերեն-հունարեն երաժշտական ձեռագրերի գոյությունը, որպես մշակութային փոխհարաբերությունների կարևոր վկայություն:

8. Հայ հնատիպ գրքի պատմության մեջ բավականին ակնառու է Տրդատ եպս. Պալյանի կատարած գործը հնատիպ գրքերի հայտնաբերման և ճշտումների ուղղությամբ: Հնատիպերի՝ Պալյանի արած նկարագրությունները մինչև օրս էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և մատենագիտական հրատարակությունների մեջ օգտագործվում են որպես սկզբնաղբյուր՝ պահպանված միակ հիշատակություն-նկարագրություն:

9. Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ Տրդատ եպս. Պալյանի նկարագրությամբ գիտական աշխարհին հայտնի են դարձել և շրջանառության մեջ մտել 17 անուն հնատիպ, այդ թվում՝ Հակոբ Մեղապարտի Պատարագատետրը (1513 թ.), և հայկական տպագրության այլ կենտրոնների՝ Վենետիկի, Ամստերդամի, Տրիեստի, Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Մադրասի 19-րդ դ. հրատարակություններ:

10. Մշակութային ժառանգության պահպանման գործում մեծ դեր և նշանակություն է վերապահել աշուղներին, հավասարապես հայախոս կամ թրքախոս՝ համեմատելով նրանց հոգևորականության հետ, նրանց ազգապահպան գործունեության մեջ գտնելով նմանություններ՝ տարբեր երկրներում (օսմանյան, ռուսական կայսրություններ) ապրող հայերին ազգային եկեղեցու, ազգային մշակույթի շուրջ համախմբելու գործում: Պալյանի կազմած աշուղների ցանկը ընդգրկում է 270-ից ավելի անուն: Նա հավաքել է ոչ միայն հայկական բանահյուսություն, այլ նաև հավաքել է հրատարակել է հայերեն-թուրքերեն ասացվածքների մի մասը՝ 1555 միավոր, իսկ հայկական հեքիաթների մեծ մասը՝ 120 միավոր, աշուղների մնացած հատորները, ավելի քան 13000 միավոր թուրքերեն առածների հրատարակության պատրաստ ձեռագրերը ոչնչացվել են:

11. Տրդատ եպիսկոպոս Պալյանի՝ Օսմանյան կայսրության տարածքում նկարագրած վանքերն այսօր գրեթե չկան, կամ մեծ մասամբ ավերված են, և արդեն նույնիսկ փլատակները չեն երևում, ուստի և նրա՝ ժամանակակցի եւ ականատեսի նկարագրություններ պարունակող հոդվածները նույն վանքերին վերաբերող պահպանված եզակի վկայություններ են, և սկզբնաղբյուրի արժեք ունեն այլևս անվերադարձ կորստի մատնված մեր մշակութային հուշարձանների համար:

12. Տրդատ եպս. Պալյանը ուսումնասիրել է մշակութային տարբեր շերտերով այնքան հարուստ Օսմանյան կայսրության տարածքում հայտնված փոքրասիական քաղաքակրթությունները՝ խեթական, հունա-հռոմեական, նախաքրիստոնեական շրջանի հուշարձանները: Նրա հրատարակած խեթական արձանագրությունները գիտական ուշագրավ կրահումներով, որոնք հետազայում հաստատվել են, արժանացել են հին աշխարհի ուսումնասիրությամբ զբաղվող հայ և եվրոպացի գիտնականների ուշադրությանը: Հրատարակել է բյուզանդական շրջանի հունարեն անթվական տապանագրեր:

13. Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանությունում Պալյանի գրած Երուսաղեմի պատմության և տեղագրության մասին համալիր աշխատությունը, որտեղ ներկայացրել է Երուսաղեմի և շրջակայքի հուշարձանները, հայկական, հունական, կաթոլիկ եկեղեցիներն ու վանքերը, նրանց ունեցած առանձին և ընդհանուր սեփականությունները, իրավունքներն ու սովորությունները, փոխհարաբերությունները միմյանց միջև, ինչպես նաև՝ պատմականորեն ձևավորված հարաբերությունները հայերի և Արևելքի քրիստոնյա մյուս ազգերի՝ ասորի, դպտի, հաբեշ եկեղեցիների հետ: Ատենախոսության մեջ համակողմանիորեն արժևորվում է Պալյանի աշխատության կարեւորությունը որպես եկեղեցական արարողությունների և ծիսակատարությունների բացառիկ մանրամասն նկարագրություն, որն էլ այն դարձնում է եզակի աղբյուր իր ասպարեզում:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՍԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Տրդատ եպիսկոպոս Պալյան (1850-1923. կենսագրության համառոտ ակնարկ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2002, 21, էջ 332-353:
2. Կենսամատենագիտություն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, «Ցուցակ հայերեն ձեռագրացի Կեսարիայ, Ջմիառնիայ և ի շրջակայա նոցին», Երևան, 2002, էջ 181-246:
3. Տրդատ եպիսկոպոս Պալեանի նամակները Արշակ Ալպոյաճեանին, Էջմիածին, 2006, Ա, էջ 81-91:
4. Արշակ Ալպոյաճյանի նամակները Տրդատ եպիսկոպոս Պալյանին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2006, 25, էջ 342-350:
5. Պալեան Տրդատ Եպիսկոպոս, Հայ վանորայք, հրատարակութեան պատրաստեց Կ. Աւետեանը, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2008, 464 էջ + 48 ներդիր:
6. Լրացումներ Տրդատ եպիսկոպոս Պալյանի մատենագիտության մեջ, Էջմիածին, 2014, Բ, էջ 116-126:

КАРИНЕ ДЕРЕНИКОВНА АВЕТЯН
ЕПИСКОП ТРДАТ ПАЛЯН - ИССЛЕДОВАТЕЛЬ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ
ХРИСТИАНСКИХ НАРОДОВ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (конец 19-го - начало
20-го веков)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 07.00.05 - «Историография, источниковедение».

Защита состоится 5-го мая 2015 г., в 14:00, на заседании специализированного совета
006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по
адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению биографии и научной деятельности духовного предводителя Кесарии, видного исследователя рукописей, библиографа, историографа, словесника епископа Трдата Паляна, что является весьма актуальным, поскольку именно благодаря его деятельности, до нас дошла целостная панорама культурно-исторической жизни нескольких восточных областей Османской империи, в частности Кесарии и смежных с ней территорий.

Палян был первым, кто сделал обойденную вниманием исследователей Кесарию, столь богатую памятниками различных культурных эпох: хеттской, средневековой христианской - предметом основательного изучения.

Целью диссертации является выявление и представление работ священнослужителя - ученого, епископа Трдата Паляна по библиографии, археологии, топографии и их публикации в условиях турецкой цензуры, а также оценка их значимости в современной науке. Впервые в диссертации изучается и вводится в оборот научное наследие Паляна, охватывающее все сферы духовно-культурной жизни Кесарии и ее окрестностей.

Диссертация состоит из введения, трех глав (восьми параграфов), выводов, списка использованных источников и литературы.

Во Введении обосновывается актуальность темы и ее новизна, указываются основные цели и задачи, методологическая база и хронологические рамки, дается краткий обзор использованных первоисточников и литературы.

Первая глава диссертации озаглавлена - “Формирование армянской общины Кесарии и предводительская и образовательная деятельность епископа Трдата Паляна” и состоит из двух параграфов. В первом параграфе - “Глава Кесарийской епархии епископ Трдат Палян (биография)” кратко показана этническая картина в Каппадокии и Кесарии, начиная со средних веков до турецких завоеваний и произошедшие в ней после этого изменения, вплоть до конца 19-го века, формирование Кесарийской епархии (1178 г.), а также биография Паляна. Во втором параграфе, озаглавленном “Духовная семинария Св. Карапетя как центр национального образования в Кесарии” подробно рассматривается тяжелое существование и деятельность национальных школ в образовательной системе и просвещении Османской империи. Уровень развития образования во всей империи был еще очень низок, несмотря на прогресс образования в христианских общинах в сравнении с образованием мусульманского населения, пользующегося поддержкой государства. Школа

действовала до июля 1915г. и давала своим выпускникам не только национальное образование и воспитание, тем самым восстанавливая в тюркоязычной Кесарии национальное самосознание, но и самим своим существованием препятствовала деятельности многочисленных школ разных конфессий, которые привлекали население бесплатным обучением. Ведь осознание необходимости образования вынуждали армян отправлять своих детей в протестантские американские школы.

Вторая глава диссертации - “Научные интересы епископа Трдата Паляна” состоит из четырех параграфов. В первом параграфе - “Работа епископа Трдата Паляна по исследованию рукописей и составленные им каталоги” приведены описания рукописей 10-19 вв. из монастырей Кесарии и ее окрестностей, составленные им каталоги, а также описания частных коллекций Кесарии. Надо отметить, что среди сохранившихся описаний армянских рукописных коллекций попадаются и рукописи на греческом языке, что свидетельствует о многовековых армяно-греческих культурных взаимосвязях. Из Кесарии сохранилось всего лишь 10 случайно спасенных и описания 170 рукописей, опубликованных Паляном. Представлены также архивные материалы 17-19 вв., документы, печати с надписями на армянском и армянописном турецком языках.

Во втором параграфе, озаглавленном “Изучение истории армянской печатной книги и заслуга Паляна в сфере книговедения”, освещаются вопросы основания и истории первых в Османской империи типографий в Константинополе и Смирне, датировки армянских печатных книг, установления личности первопечатника Акопа Мехапарта, составления библиографий первопечатной литературы.

В третьем параграфе - “Фольклористические изыскания епископа Трдата Паляна и сборник „Армянские ашуги”, представлены почти все виды этого жанра: творчество ашугов, сказки, сказания, колыбельные, романсы, старые народные песни, загадки, пословицы и поговорки, записанные на наречиях различных деревень Кесарии. Однако, самым объемным является составленный им сборник ашугов на армянском и армянописном турецком языках.

В четвертом параграфе, который озаглавлен “Труд епископа Т. Паляна „Армянские монастыри в Турции” - как первоисточник о турецкой политике культурного геноцида”, рассматриваются охват географии, источники, структура и цели исследования. Этот труд Паляна, где описываются не только расположенные на территории Османской империи монастыри, является первейшим и документально подтвержденным первоисточником по истории Кесарии и кесарийских армян, Малатии, Севастии, Амасии, Высокой Армении, Трабзона и в то же время является всесторонним исследованием, основанным на рукописных и эпиграфических данных. Число дошедших до нас, описанных Паляном, монастырей доходит до 346-ти. Эти монастыри по большей части не сохранились или почти все разграблены и разрушены, поэтому его статьи, содержащие в основном описания очевидцев, являются уникальными сохранившимися свидетельствами об этих монастырях и оцениваются как первоисточники.

Третья глава диссертации озаглавленная “Епископ Трдат Палян - исследователь культуры немусульманских народов на территории Османской империи” состоит из двух параграфов. В первом параграфе, озаглавленном “Изучение памятников дохристианского

периода” рассматриваются приведенные Паляном сведения и заслуживающие пристального внимания суждения о памятниках различных культур: хеттской и относящихся к дохристианскому периоду греческой и римской. В ходе последующего развития хеттологии, благодаря прочтению и расшифровке надписей, исследованы и освещены многие невыясненные вопросы, подтверждающие высказывания Паляна, в то время еще весьма гипотетические.

Во втором параграфе, озаглавленном “Описание христианских памятников Иерусалима и вопросы духовно-культурных взаимоотношений армян с другими христианскими общинами в труде „Святая Земля: Описание Иерусалима и святых мест”, представлены история святынь Иерусалима, история взаимоотношений и прав армян с другими христианскими общинами: греческой православной и католической, коптской, эфиопской церквями, и, в частности, обстоятельное описание их обрядов.

Исследование в основном является историей подробного описания церковных обрядов, торжеств и ритуалов того времени, написанной современником - священнослужителем и непосредственным участником, и именно поэтому переданные им сведения незаменимы и имеют ценность первоисточника.

В Заключении приведены основные результаты диссертации.

KARINE AVETYAN

**BISHOP TRDAT PALYAN - RESEARCHER OF CULTURAL HERITAGE OF
CHRISTIAN PEOPLES OF THE OTTOMAN EMPIRE (end of the 19th - beginning of
the 20th centuries)**

**The defense of the dissertation will take place at 14:00, on 5th of May of 2015, the meeting of
the Specialized Council 006 «World History» at the Institute of Oriental Studies of NAS
RA. Address: 0019, Marshal Baghramyan Ave., 24/4, Yerevan.**

**The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of
Philosophy in the field of "Historiography, Source studies" 07.00.05.**

SUMMARY

The dissertation is dedicated to the research of biography and scientific activity of a spiritual leader of Caesarea, Bishop Trdat Palyan, a prominent researcher of manuscripts, Bibliography, Historiography, Language and Literature, which is a highly relevant, since it is thanks to his activities and holistic view of the historical and cultural lives of several eastern provinces of the Ottoman Empire, particularly Caesarea and adjacent territories, reached us. Palyan was the first who made Caesarea, which is rich in monuments of different cultural epochs - Hittite, pre-Christian and medieval Christian, subject of a thorough study.

The aim of dissertation is the identification and presentation of works of Priest-intellectual Bishop Tiridat Palyan on bibliography, archeology, topography and their publication in the unpredictable conditions of the Turkish censorship, to assess their significance in modern science. For the first time in thesis studied and introduced into circulation scientific heritage of Palyan, covering all areas of spiritual and cultural life of Caesarea and its environs.

The dissertation consists of an introduction, three chapters (eight sections), conclusion, list of references and literature.

In the introduction are substantiated the relevance of the topic and its actuality, purposes and objectives, methodological base and chronological framework, a brief review of the primary sources used and literature.

The first chapter of the dissertation is titled - "The formation of the Armenian community of Caesarea and leading and educational activities of Bishop Trdat Palyan", which consists of two sections.

In the first section - "The head of the diocese, Bishop of Caesarea Trdat Palyan (biography)" is briefly reviewed the ethnic picture in Cappadocia Caesarea since the middle ages till the Turkish conquest and later changes that took place after that, up to the late 19th century till the formation of the diocese of Caesarea (1178), as well as biography of Palyan.

In the second section, "Seminary St. Karapet as a school of national education in Caesarea" are described the details of the painful existence and activities of national schools in the educational system and enlightenment of the Ottoman Empire. The level of education in the Empire was very low, despite the progress of education in the Christian communities as compared with the formation of the Muslim population, supported by the State. Seminary operated till July 1915 and provided graduates not only national education and training, thereby restoring national identity in Turkish-speaking Caesarea, but also by its existence inhibited the activity of numerous schools of different faiths which activated in the Armenian environment, because of free education that attracted people the most. Indeed, awareness of the need for education on the one hand, and extreme requirement on the other hand, the Armenians were forced to send their children to Protestant American schools.

The second chapter - "Scientific interests of Bishop Trdat Palyan" consists of four sections.

In the first section, "Research on manuscripts by Bishop Trdat Palyan and his compiled catalogs" are descriptions of the manuscripts of 10-19 cc., catalogs made by him, as well as descriptions of private collections of Caesarea. It should be noted that among the preserved descriptions of Armenian manuscript collections, are also some manuscripts in Greek, indicating Armenian-Greek centuries old cultural relationship. From Caesarea remained only 10 haphazardly saved, and descriptions of 170 manuscripts published by Palyan. Archival materials of 17-19 cc., documents and stamps with inscriptions in Armenian and in Armenian-writing Turkish languages are presented.

In the second section, entitled "Study of history of the Armenian printed book and merits of Palyan in Book Science", highlights the issues of foundation and history of the first printing press in the Ottoman Empire in Constantinople and Smyrna dating of the Armenian printed books, identification printing pioneer Hakob Meghapart, compiling bibliographies early printed literature.

In the third section "Folklore researches of Bishop Trdat Palyan and a collection "Armenian ashughs", are presented almost all kinds of this genre: activities of ashughs, fairy tales, stories, lullabies, love songs, old folk songs, riddles, proverbs and sayings recorded in the various dialects of villages of Caesarea. However, the most extensive collection among them is collections of ashughs in the Armenian and Armenian-writing Turkish languages.

In the fourth section, entitled "Work of Bishop T. Palyan "Armenian monasteries in Turkey"- as the source of the Turkish policy of cultural genocide", considers the coverage of geography, resources, structure and purpose of the study. This work of Palyan, which describes not only monasteries located on the territory of the Ottoman Empire, as an primary and documented original source on the history of Caesarea and caesarean armenians, Malatya, Sebastia, Amasya, Upper Armenia, Trabzon and at the same time is a comprehensive study based on a manuscript and epigraphic data.

The number of extent described by Palyan, monasteries comes to 346. These monasteries are largely not saved or almost all looted and destroyed by the famous barbarian hand, since its articles containing mainly eyewitness, are unique saved evidence of these monasteries and evaluated as primary sources.

The third chapter of the thesis entitled "The Bishop Trdat Palyan - researcher of culture of non-muslim peoples on the territory of the Ottoman Empire" consists of two sections. In the first section, entitled "The study of the monuments of pre-Christian period" considered information by Palyan and expressed opinions about the remarkable monuments of different cultural backgrounds: Hittite relating to the pre-Christian Greek and Roman periods. During the subsequent development of Hittitology, by reading and deciphering the inscriptions, many vague and confusing questions, confirming statements of Palyan, at that time still very hypothetical, were investigated.

In the second section, entitled "Description of Christian monuments in Jerusalem and the matters of spiritual and cultural relationships between Armenians and other Christian communities in the work " The Holy Land: Description of Jerusalem and the holy places" presents the history of holy places of Jerusalem, history of rights and human relationship of Armenians with other Christian communities: Greek Orthodox, Catholic, Coptic, Ethiopian Church, and, in particular, a detailed description of their rituals.

The study is mostly a history of detailed description of the church rites, ceremonies, rituals of the time written by contemporaries - a priest and a direct participant, so the information passed to them have irreplaceable value of the primary source.

In conclusion, are presented the main results of the thesis.